



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 38-Ա

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Բերդ համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

- 1.Բերդ համայնքի 2018թվականի տեղական բյուջեի եկամտային և ծախսային մասերում փոփոխություններ կատարելու մասին:
/Զեկ.Կ.Սարգսյան/
- 2.Բերդ համայնքի ղեկավարի հաղորդում բյուջեի ընթացքի մասին:
/Զեկ.Կ.Սարգսյան/
- 3.<<Վարագավանի մանկապարտեզ, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն վերակազմակերպման հիմքով ստեղծելու մասին>> Բերդի համայնքի ղեկավարի 06.07.2018թվականի N 345-Ա որոշումը հաստատելու մասին:
/Զեկ.Հ.Մանուչարյան/
- 4.Ամերիկայի <<Հայ օգնության ֆոնդ>> բարեգործական կազմակերպության Հայաստանի մասնաճյուղին անհատույց օգտագործման տարածք տրամադրելու մասին:
/Զեկ.Հ.Մանուչարյան/
- 5.Բերդ համայնքի գույքացանկում ավելացում կատարելու մասին:
/Զեկ.Հ.Մանուչարյան/
- 6.Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի (քնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին:
/Զեկ.Վ.Գրիգորյան/
- 7.Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը նվիրաբերելու մասին:
/Զեկ.Հ.Մանուչարյան/

8. Բերդ համայնքի բնակիչների անվամբ գրանցված փոխադրամիջոցների և հասարակական նշանակության շինության գույքահարկի տույժերը զեղչելու մասին:
/Զեկ.Հ.Մանուչարյան/

9.<<Տավուշի մարզի Վ.Ծաղկավանի Հրանտ Խաչատրյանի անվան թիվ 1 մանկապարտեզ>>,<<Ներքին Կարմիրաղբյուրի մանկապարտեզ>>,<<Արծվաբերդի մանկապարտեզ>>,<<Այգեծորի մանկապարտեզ>>,<<Վերին Կարմիրաղբյուրի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակներում նոր հաստիքներ ավելացնելու մասին:
/Զեկ.Հ.Մանուչարյան/

10.Բերդ համայնքի հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվությունը հաստատելու մասին:
/Զեկ.Մ.Գևորգյան/

11.Բերդ համայնքի Ներքին Կարմիր Աղբյուր գյուղի 11 փողոցի 25 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող օժանդակ տնտեսությունը հողամասով օտարելու մասին:
/Զեկ.Մ.Գևորգյան/

12.Բերդ համայնքի Բերդ քաղաքի Մաշտոցի փողոցի 33/73 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող օժանդակ շինությունը հողամասով օտարելու մասին:
/Զեկ.Մ.Գևորգյան/

13.Բերդ համայնքի Այգեծոր գյուղի 8 փողոցի 83/2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտնակը հողամասով օտարելու մասին:
/Զեկ.Մ.Գևորգյան/

14.Բնակելի կառուցապատման հողամասերից 0.056 հա մակերեսով 11-002-0019-0050 ծածկագրով հողամասն աճուրդով օտարելու մասին:
/Զեկ.Վ.Գրիգորյան/

15.Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի ֆիզիկական անձանց հողի հարկի արտոնություններ սահմանելու մասին:
/Զեկ.Հ.Մանուչարյան/

16.Գյուղատնտեսական 11-048-115-007, 11-048-119-011, 11-048-139-005, 11-048-142-004, 11-048-30 064 ծածկագրերով վարելահողերը և 11-048-154-025, 11-048-305-039 ծածկագրերով խոտհարքներ համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկ.Մ.Գևորգյան/

17.Անհատ ձեռնարկատեր Անահիտ Գյոզալյանին անհատույց օգտագործման տարածք տրամադրելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԲԱՆԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ *Arnd*
ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ *Arnd*
ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ *Arnd*
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ *Arnd*
ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ *Arnd*
ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ *Arnd*
ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ *Arnd*
ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՅՈՒՐ *Arnd*
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ *Arnd*
ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ *Arnd*

Համայնքի ղեկավար՝



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 39-Ա

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Բերդ համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 22-ի N 15-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2018 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերը ավելացնել՝ 3373.3հազար ՀՀ դրամի չափով, և հաստատել.

ա)եկամուտների մասով	772273.3հազար ՀՀ դրամ,
բ)ծախսերի մասով	852043.3 հազար ՀՀ դրամ,
գ)դեֆիցիտի ծածկմանն ուղղված միջոցներ	79770.0 հազար ՀՀ դրամ:

2.2018 թվականի բյուջեի եկամտային մասում <<Օրենքով և այլ իրավական ակտերով համայնքի բյուջե մուտքագրվող այլ եկամուտ>> տողը ավելացնել 3373.3 հազար ՀՀ դրամով համաձայն <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> հասարակական կազմակերպության և Բերդի համայնքապետարանի միջև կնքված թվով 4 շնորհի պայմանագրերի:

3.2018 թվականի բյուջեի ծախսային մասում <<Գյուղատնտեսություն>> /04.02.01.51/ ծախսերի կատարման նախահաշվը /հոդված 4239/ ավելացնել՝ 3373.3 հազար ՀՀ դրամով:

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՔՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆԱԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՅՈՍ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԿԱՀՐԱՄ

Համայնքի ղեկավար՝



ՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Հավելված 1
Բերդ համայնքի
ավագանու 2018 թվականի
հունիսի 23-ի N 39-Ա որոշման

Համայնքի 2018 թվականի համար սահմանված եկամտատեսակները

Հ/հ	Ե Կ Ա Մ Տ Ա Տ Ե Ս Ա Կ Ն Ե Ր Ը	Տարեկան պլան /հազ.դրամ/	Ճշտված պլան հազ.դրամ
	ՄԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		
1	Հողի ՀԱՐԿ	44000,0	44000,0
2	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ	59200,0	59200,0
3	ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ	6000,0	6000,0
4	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ	3667,1	3667,1
5	ՎԱՐՉԱՎՃԱՐՆԵՐ	14500,0	14500,0
6	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ	42708,9	42708,9
7	Հողի եւ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ		
	ԸՆԴԱՄԵՆԸ	170076,0	170076,0
	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ		
8	ԴՈՏԱՑԻԱ	588463,4	588463,4
9	ՊԱՏԿԻՐԱԿԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5363,2	5363,2
10	ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ	3967,4	3967,4
11	Ընթացիկ սուբվենցիա		
12	Այլ եկամուտներ	30,0	1030,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	597824,00	598824,00
13	ՏԱՐԵՍԿԱԶԲԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ	79770,00	79770,00
14	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՅԵ	42761,70	42761,70
15	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՅԵ	37008,30	37008,30
	Ա Մ Բ Ո Ղ Զ Ը	847670,00	848670,00

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ.ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Հավելված 2
Բերդ համայնքի
ավագանու 2018 թվականի
հունիսի 23-ի N 39-Ա որոշման

Համայնքի 2018թ. տեղական բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի
գործառնական դասակարգման

Հ/հ	ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	Տարեկան պլան /հազ.դրամ/	տարեկան ճշտված պլ. հազ.դրամ
1	ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ	240191,0	240191,0
2	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ/մանկապարտեզ/	200000,0	200000,0
3	ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԾԱՌ որից	84499,0	84499,0
	Գրադարան	10000,0	10000,0
	մշակույթի տուն	23300,0	23300,0
	Այլ մշակութային կազմ/երաժշտական, արվեստ, այլ/ 08.02.04/	36199,0	36199,0
4	ՀԱՆԳԻՍՏԻ ՄՊՈՐՏԻ ԾԱՌ/զբոսայգի, մարզադաշտ	15000,0	15000,0
5	ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, ԿՈՍՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	226155,0	227155,0
6	ՍՈՑ ԾԱԽՍԵՐ	6000,0	6000,0
7	ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ		
8	ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ	1795,0	1795,0
9	ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ	20899,1	20899,1
10	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5363,2	5363,2
11	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	38270,0	38270,0
	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	19154,7	19154,7
13	ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ	5343,0	5343,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	847670,0	848670,0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՄԱՆՈՒՀԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 40-Ա

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի 2018թ. 2-րդ եռամսյակի բյուջեի ընթացքի մասին՝ համաձայն 1 և 2 հավելվածների:

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՔՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ


ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՒՐ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

Համայնքի ղեկավար

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ



Համայնքի 2018 թվականի 1-ին կիսամյակի եկամուտների կատարման մասին

ԵԿԱՍՏԱՏԵՍԱԿՆԵՐ Ր		Տարեկան պլան /հազ.դրամ/	Ճշտված պլան հազ.դրամ	2018թ. 1-ին կիսամյակ		
ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ				Պլան	Փաստացի	Կատ. %
1	Հողի հարկ	44000,0	44000,0	20000,0	24468,70	122,3
2	Գոթքայարկ	59200,0	59200,0	32200,0	27696,90	86,0
3	ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ	6000,0	6000,0	3374,0	2744,30	81,3
4	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ	3667,1	3667,1	2200,0	2546,60	115,8
6	ՎԱՐՉԱՎՃԱՐՆԵՐ	14500,0	14500,0	6300,3	5673,50	90,1
7	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ	42708,9	42708,9	21000,0	24938,30	118,8
8	Հողի եւ գոթքի ՕՏԱՐՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ				2044,3	
ԸՆԴԱՄԵՆԸ		170076,0	170076,0	85074,3	90112,60	105,9
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ						
9	ԴՈՏԱՑԻԱ	588463,4	588463,4	294231,7	294231,7	100,0
10	ՊԱՏՎԻՐԱԿԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5363,2	5363,2	2710,0	1945,8	71,8
11	ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ	3967,4	3967,4	1654,4	1654,4	100,0
12	Ընթացիկ սուբվենցիա					
13	Այլ եկամուտներ	30,0	1030,0	1030,0	5973,4	579,9
ԸՆԴԱՄԵՆԸ		597824,00	598824,00	299626,10	303805,30	101,4
14	ՏԱՐԵՍԿՁԲԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ	79770,00	79770,00	79770,00	79770	
15	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	42761,70	42761,70	42761,7	42761,7	
16	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	37008,30	37008,30	37008,3	37008,3	
ԱՄԲՈՂՋԸ		847670,00	848670,00	464470,40	473687,90	101,98

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ.ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Հավելված 2
Բերդ համայնքի
ավագանու 2018 թվականի
հունիսի 23-ի N 40-Ա որոշման

Համայնքի 2018թ. տեղական բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական
դասակարգման

Հ/հ	ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	Տարեկան նախատեսված ծախս /հազ.դրամ/	Տարեկան ճշտված պլ. հազ.դրամ	2018թ 1-ին կիսամյակ		
				Պլան	Փաստացի	Կատ. %
1	ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ	240191,0	240191,0	128131	82836,9	64,65
2	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ/մանկապարտեզ/	200000,0	200000,0	103000	102703,9	99,71
3	ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԾԱՌ որից	84499,0	84499,0	44799,0	30227,8	67,47
	Գրադարան	10000,0	10000,0	5000,00	3536,5	70,73
	մշակույթի տուն	23300,0	23300,0	11905,00	10364,2	87,06
	Այլ մշակութային կազմ./երաժշտական,արվեստ, այլ/	36199,0	36199,0	19860,00	9851,7	49,61
4	ՀԱՆԳԻՄԱՆ ՄՊՈՐՏԻ ԾԱՌ/գրքսալոգի, մարզադպ.	15000,0	15000,0	8034,0	6475,4	80,60
5	ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, ԿՈՍՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	226155,0	227155,0	113100,0	80727,7	71,38
6	ՄՈՑ ԾԱԽՍԵՐ	6000,0	6000,0	3300,0	3235,0	98,03
7	ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ				-2044,3	
8	ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ	1795,0	1795,0	1795,0	1115,0	62,12
9	ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱԿՈՐՈՒՄ	20899,1	20899,1	20470,0	1598,0	7,81
10	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5363,2	5363,2	2600,0	2045,6	78,68
11	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	38270,0	38270,0	26280,0	13843,7	52,68
12	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	19154,7	19154,7	16519,0	8846,5	53,55
13	ԶՐԱՄՍՏԱԿԱՐԱՐՈՒՄ	5343,0	5343,0	2600,0	794,3	30,55
	ԸՆԴԱՄԵՆԸ	847670,0	848670,0	462594,0	325930,1	70,46

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

 Հ.ՄԱՆՈՒՇԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 41-Ա

**<<ՎԱՐԱԳԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,,ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՔՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԲԵՐԴԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.07.2018թվականի N 345-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի դրույթներով

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել <<Վարագավանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպություն վերակազմակերպման հիմքով ստեղծելու մասին>> Բերդի համայնքի ղեկավարի 06.07.2018 թվականի N 345-Ա որոշումը:

2.Հաստատել <<Վարագավանի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԻԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՐԵՄԻԵՐ ԱՐՏԱԿ

ՊՐԵՄԻԵՐ ԱՐՏՅՈՒՄ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՅԱՆ ԿԱԶՄԱՐ

Համայնքի ղեկավար



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՋԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 42-Ա

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագրի շրջանակներում ստղծված գույքը Հայաստանի Հանրապետության համայնքներին նվիրաբերելու մասին 17 մայիսի 2018 թվականի N 572-Ա որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագրի շրջանակներում ստղծված գույքը ընդգրկել Բերդ համայնքի գույքացանկում 1,060,967,616 ՀՀ դրամ արժեքով.

1. Արծվաբերդի ջրամատակարարման համակարգ՝ 15484 գծ.մ, 253,275,546 ՀՀ դրամ,
2. Այգեծորի ջրամատակարարման համակարգ՝ 16745 գծ.մ, 365,873,304 ՀՀ դրամ,
3. Զինչինի ջրամատակարարման համակարգ՝ 12925 գծ.մ, 204,258,517 ՀՀ դրամ,
4. Նորաշենի ջրամատակարարման համակարգ՝ 11611 գծ.մ, 237,560,249 ՀՀ դրամ:

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆԱԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՐՊՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ՊՈՐՊՈՅԱՆ ԱՐՏՅՈՒՐ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՅԱՆ ՎԱՀՐԱՄ

Համայնքի ղեկավար



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒՆԻՍԻ 2018 թվականի N 43-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14³ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի (բնակավայրերի) գլխավոր հատակագիծը՝ (այսուհետ՝ Գլխավոր հատակագիծ) համակցված տարածական պլանավորման փաստաթղթերով, համաձայն հավելվածի:

2. Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14³ հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի <<Կառուցապատման համար նախատեսված տարածքների բաշխումն ըստ նպատակային նշանակության փոփոխությունների>> գծագրին (այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան:

3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան հերթականության և <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14³ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԲԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՅՈՒՐ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՅԱՆ ՎԱՀՐԱՄ

Համայնքի ղեկավար



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 44-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՆԿԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետի, 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2018 թվականի փետրվարի 15-ի համայնքի ղեկավարին ուղղած թիվ ՊՆ035/244 գրությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի Այգեժոր գյուղի 12-րդ փողոցի, 21 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող (կադաստրային ծածկագիր՝ 11-010-0023-0002 (0.28112) հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ ՀՀ ԶՈՒ զինծառայողների համար բազմաբնակարան շենք կառուցելու նպատակով:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառնությունների իրականացումը:

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՅՈՄ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՅԱՆ ԿԱՀՐԱՄ

Համայնքի ղեկավար



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք

ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 45-Ա

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԸ ՁԵՂՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բերդ համայնքի Այգեծոր գյուղի բնակիչներ Ազատ Գրիգորյանը, Նվեր Օրդյանը, Սամվել Գրիգորյանը, Վանիկ Միրզոյանը, Սերյոժա Դալլաքյանը և Յուրիկ Մելքումյանը, Նավուր գյուղի բնակիչներ Անատոլի Նիգոյանը և Արմեն Սարգսյանը, Չորաթան գյուղի բնակիչ Գրիգոր Ուդումյանը, Արծվաբերդ գյուղի բնակիչ Կարեն Վարդանյանը դիմել են համայնքապետարան՝ գույքահարկի տվյալների բազայում իրենց անվամբ գրանցված փոխադրամիջոցների գույքահարկի գծով առաջացած տույժերը զեղչելու խնդրանքով: Ազատ Գրիգորյանը վճարել է գույքահարկի գծով առաջացած պարտքը 88940 ՀՀ դրամի չափով, Նվեր Օրդյանը վճարել է գույքահարկի գծով առաջացած պարտքը 1730 ՀՀ դրամի չափով, իսկ փոխադրամիջոցն օտարվել է 31.03.2012թվականին, Սամվել Գրիգորյանը վճարել է գույքահարկի գծով առաջացած պարտքը 31540 ՀՀ դրամի չափով, Վանիկ Միրզոյանը վճարել է իր անվամբ գրանցված հասարակական նշանակության շինության գույքահարկի գծով առաջացած պարտքը 9950 ՀՀ դրամի չափով, Յուրիկ Մելքումյանը վճարել է գույքահարկի գծով առաջացած պարտքը 8700 ՀՀ դրամի չափով, Անատոլի Նիգոյանը վճարել է գույքահարկի գծով առաջացած պարտքը 35880 ՀՀ դրամի չափով, իսկ փոխադրամիջոցը ժամանակավոր հաշվառումից հանվել է, Արմեն Սարգսյանը վճարել է գույքահարկի գծով առաջացած պարտքը 41250 ՀՀ դրամի չափով, իսկ փոխադրամիջոցը ժամանակավոր հաշվառումից հանվել է 2014թ., Գրիգոր Ուդումյանը վճարել է գույքահարկի գծով առաջացած պարտքը 91200 ՀՀ դրամի չափով, Կարեն Վարդանյանը վճարել է գույքահարկի գծով առաջացած պարտքը 45000 ՀՀ դրամի չափով, սակայն նրանք հնարավորություն չունեն վճարելու գույքահարկի գծով առաջացած տույժերը:

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Ազատ Գրիգորյանի անվամբ գրանցված MERCEDES-BENZ C320 մակնիշի 35M0909 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել զեղչ, առաջացած տույժի 3495 ՀՀ դրամի չափով:

2. Նվեր Օրդյանի անվամբ գրանցված ՎԱՁ 2106 մակնիշի 13SL685 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել զեղչ, առաջացած տույժի 939 ՀՀ դրամի չափով:

3. Սամվել Գրիգորյանի անվամբ գրանցված ՎԱՁ 21214 մակնիշի 34UF213 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել զեղչ, առաջացած տույժի 2688 ՀՀ դրամի չափով:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք

ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 46-Ա

«ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ Վ.ԾԱՂԿԱՎԱՆԻ ՀՐԱՆՈՒ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ՆԵՐՔԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԱՐԾՎԱԲԵՐԴԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԱՅԳԵԶՈՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ՆՈՐ ՀԱՍՏԻՔՆԵՐ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1.<<Տավուշի մարզի Վ.Ծաղկավանի Հրանտ Խաչատրյանի անվան թիվ 1 մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում ավելացնել նոր հաստիքներ և հաստատել՝ <<Տավուշի մարզի Վ.Ծաղկավանի Հրանտ Խաչատրյանի անվան թիվ 1 մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N1 հավելվածի:

2.<<Ներքին Կարմիրաղբյուրի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում ավելացնել նոր հաստիքներ և հաստատել՝ <<Ներքին Կարմիրաղբյուրի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N2 հավելվածի:


3.<<Արծվաբերդի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում ավելացնել նոր հաստիքներ և հաստատել՝ <<Արծվաբերդի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N3 հավելվածի:

4.<<Այգեծորի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում ավելացնել նոր հաստիքներ և հաստատել՝ <<Այգեծորի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N4 հավելվածի:

5.<<Վերին Կարմիրաղբյուրի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում ավելացնել նոր հաստիքներ և հաստատել՝ <<Վերին Կարմիրաղբյուրի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N5 հավելվածի:

ԱՐԱՎԱՅԱՆ ՎԱՐԴԱՆ *[Signature]*
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ *[Signature]*
ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ *[Signature]*
ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ *[Signature]*
ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ *[Signature]*
ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ 271
ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ *[Signature]*
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ *[Signature]*
ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ *[Signature]*
ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ *[Signature]*
ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ *[Signature]*
ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՒՐ *[Signature]*
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ *[Signature]*
ՍՈՒՔԻԱՅԱՆ ՎԱՀՐԱՄ *[Signature]*

Համայնքի ղեկավար



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Հավելված N 1

Բերդ համայնքի ղեկավարի

2018թվականի հունիսի 23-ի N 46-Ա
որոշման


Տավուշի մարզի Վ.Ծաղկավանի Հրանտ Խաչատրյանի անվան թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների
թվաքանակը՝

9

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը/դրամ/	Հավելավճար	Ամսական աշխատավարձ /դրամ/
1	2	3	4	5	6
1	Տնօրեն	1	80 000,0		80 000,0
2	Հաշվապահ	0,5	72 751,0		36 375,5
3	Դաստիարակ	2	72 751,0		145 502,0
4	Դաստիարակի օգնական	2	72 751,0		145 502,0
5	Բուժքույր	0,5	72 751,0		36 375,5
6	Խոհարար	1	72 751,0		72 751,0
7	Տնտեսվար	0,5	72 751,0		36 375,5
Ընդամենը		7,5	516 506,0	-	552 881,5

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ.ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Հավելված N 2

Բերդ համայնքի ղեկավարի

2018թվականի հունիսի 23-ի N 46-Ա

որոշման

Ներքին Կարմիրադեղյուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը,
հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների
թվաքանակը՝

9

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը/ դրամ/	Հավելավճար	Ամսական աշխատավարձ /դրամ/
1	2	3	4	5	6
1	Տնօրեն	1	80 000,0		80 000,0
2	Հաշվապահ	0,5	72 751,0		36 375,5
3	Դաստիարակ	2	72 751,0		145 502,0
4	Դաստիարակի օգնական	2	72 751,0		145 502,0
5	Բուժքույր	0,5	72 751,0		36 375,5
6	Խոհարար	1	72 751,0		72 751,0
7	Տնտեսվար	0,5	72 751,0		36 375,5
Ընդամենը		7,5	516 506,0	-	552 881,5

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ.ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Հավելված N 3

Բերդ համայնքի ղեկավարի

2018թվականի հունիսի 23-ի N 46-Ա

որոշման

Արժվաբերողի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը,
հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 15

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը/դրամ/	Հավելավճար	Ամսական աշխատավարձ /դրամ/
1	2	3	4	5	6
1	Տնօրեն	1	100 000,0		100 000,0
2	Հաշվապահ	0,5	72 751,0		36 375,5
3	Դաստիարակ	3	72 751,0		218 253,0
4	Դաստիարակի օգնական	3	72 751,0		218 253,0
5	Բուժքույր	0,75	72 751,0		54 563,3
6	Երաժշտական ղեկավար	0,5	72 751,0		36 375,5
7	Խոհարար	1	72 751,0		72 751,0
8	Խոհարարի օգնական	1	72 751,0		72 751,0
9	Լվացքարար	0,5	72 751,0		36 375,5
10	Տնտեսվար-պահեստապետ	1	72 751,0		72 751,0
Ընդամենը		12,3	754 759,0	-	918 448,8

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ.ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Հավելված N 4


Բերդ համայնքի ղեկավարի
2018թվականի հունիսի 23-ի N 46-Ա
որոշման

Այգեծորի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը
և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 15

Գ/Գ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը/դրամ/	Հավելավճար	Ամսական աշխատավարձ /դրամ/
1	2	3	4	5	6
1	Տնօրեն	1	100 000,0		100 000,0
2	Հաշվապահ	0,5	72 751,0		36 375,5
3	Դաստիարակ	3	72 751,0		218 253,0
4	Դաստիարակի օգնական	3	72 751,0		218 253,0
5	Բուժքույր	0,75	72 751,0		54 563,3
6	Երաժշտական ղեկավար	0,5	72 751,0		36 375,5
7	Խոհարար	1	72 751,0		72 751,0
8	Խոհարարի օգնական	1,0	72 751,0		72 751,0
9	Լվացքարար	0,5	72 751,0		36 375,5
10	Տնտեսվար-պահեստապետ	1	72 751,0		72 751,0
Ընդամենը		12,3	754 759,0	-	918 448,8

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ.ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Հավելված N 5

Բերդ համայնքի ղեկավարի
2018թվականի հունիսի 23-ի N 46-Ա
որոշման


Վերին Կարմիրաղբյուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը,
հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների
թվաքանակը՝

10

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը/ դրամ/	Հավելավճար	Ամսական աշխատավարձ /դրամ/
1	2	3	4	5	6
1	Տնօրեն	1	80 000,0		80 000,0
2	Հաշվապահ	0,5	72 751,0		36 375,5
3	Դաստիարակ	2	72 751,0		145 502,0
4	Դաստիարակի օգնական	2	72 751,0		145 502,0
5	Բուժքույր	0,5	72 751,0		36 375,5
6	Երաժշտական ղեկավար	0,5	72 751,0		36 375,5
7	Խոհարար	1	72 751,0		72 751,0
8	Տնտեսվար	0,5	72 751,0		36 375,5
Ընդամենը		8,0	589 257,0	-	589 257,0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ.ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 47-Ա

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել՝ Բերդ համայնքի հողային ֆոնդի առկայության և բաշխման (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի, գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների) հաշվետվությունը, համաձայն N1 հավելվածի (Ձև N 22, 22ա):
2. Հաստատել՝ Բերդ համայնքի սեփականաշնորհված և վարձակալական հիմունքներով հատկացված հողերի օգտագործման սխեման, համաձայն N2 հավելվածի:
3. Հաստատել՝ Բերդ համայնքի վարձակալությամբ հատկացվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վարձավճարների չափը 1 հեկտարի հաշվով, համաձայն N3 հավելվածի:

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԲԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՐԵՍԻԴԵՆՏ ԱՐՏԱԿ

ՊՐԵՍԻԴԵՆՏ ԱՐՏՅՈՒՄ

ՍԱԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՅԱՆ ԿԱԶՄ

Համայնքի ղեկավար



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործարանական նշանակության և սեփականության տույլետների, առ 13/07/2018թ.)

Uwaga

Տափուշ
(անվանում)

Համայնք

11

(buck)

(հեկտարներով)

[illegible]

Մարզ^ա

Համայնք^ա

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տավուշ

(անվանումը)

Բերդ

(անվանումը)

Ձև

22ա

11


(կող)

871

(կող)

(կող)									
NN	Նպատակային նշանակություն	Գործառնական նշանակություն, հողատեսք	կող N/N	Ընդամենը ոռոգվող հողեր ¥2+3+4+5+6	Սեփականության սուբյեկտ				
					ՀՀ քաղաքացիներ	ՀՀ փրավար անավա	համայնքային	պետական	Օտար և օրկրացիներ
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6
1,1	1. Գյուղատնտեսական	վարելահող		695,8	626,8		69,0		
1,2		բազմաշառ տնվարկներ, ընդամենը		542,3	508,2	0,2	33,9		
1.2.1		այդ թվում ^ա պտղատու այգի		26,0	13,6		12,4		
1.2.2		խաղողի այգի		516,3	494,6	0,2	21,5		
1.2.3		այլ							
1,3		խոտհարք							
1,4		արոտ							
1,5		այլ հողատեսքեր							
1		Ընդամենը (1.1+1.2+1.3+1.4+1.5)			1238,1	1135,0	0,2	102,9	
2,1	2. Բնակավայրերի	բնակելի կառուցապատման		344,0	344,0				
2.1.1		այդ թվում տնամերձ հողեր		344,0	344,0				
2.1.2		այգեգործական (ամառանոցային)							
2,2		ընդհանուր օգտագործման							
2,3		այլ հողեր							
2		Ընդամենը (2.1+2.2+2.3)			344,0	344,0			
3	3. Արդյունաբ., ընդհանրագյուղ., և այլ արտ. նշանակություն								
4	4. Ընդգծողական, տրանսպ., վաճար, կոմունալ-ինֆրաստրուկտուրային								
5	5. Հատուկ պահպանվող տարածքների								
6	6. Հատուկ նշանակության								
7,1	7. Անտառային	անտառ							
7,2		թփուտ							
7,3		վարելահող							
7,4		խոտհարք							
7,5		արոտ							
7,6		այլ հողեր							
7		Ընդամենը (3.1+3.2+3.3+3.4+3.5+3.6)							
8	8. Ջրային								
9	9. Պահուստային								
ԸՆԴԱՄԵՆԸ ՈՐՈՐԳԱՆՈՂ ՀՈՂԵՐ				¥1+2+3+4+5+6+7+9 ^ա	1582,1	1479,0	0,2	102,9	

Համայնքի ղեկավար՝


Ստորագրություն
Հ.Մանուչարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 48-Ա

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐՄԻՐ ԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ 11 ՓՈՂՈՑԻ 25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕԺԱՆԴԱԿ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ կետով և 35-րդ կետի դ) ենթակետով

Համայնքի ավագանին որոշում է՝

